ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/3183/02/24 ք. Երևան
26 Ապրիլի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Վահագն Թորոսյանի, ծանոթանալով «Յունիմայն» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-20/4» ծածկագրով գնման գործընթացի արդյունքում «Յունիմայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ կայացված 01.04.2024թ.-ի թիվ 112 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Յունիմայն» ՍՊ ընկերությունը 22.04.2024թ.-ին դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-20/4» ծածկագրով մրցույթի արդյունքում «Յունիմայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 01.04.2024թ.-ի թիվ 112 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Հայցադիմումին կից ներկայացվել է 50.000 ՀՀ դրամ պետական տուրքի վճարման անդորրագիրը և միաժամանակ ներկայացվել է միջնորդություն՝ պետական տուրքի չվճարված մասով հայցվորին պետական տուրքի վճարման արտոնություն տալու խնդրանքով:
Դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից պետական տուրքը վճարվել է օրենքով սահմանված չափով, հետևաբար պետական տուրքի արտոնություն կիրառելու մասին միջնորդությունն առարկայազուրկ է, ինչի պատճառով դատարանն այն քննարկման առարկա չի դարձնում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
Նույն օրենսգրքի 234.6. հոդվածի 1-3 մասերի համաձայն՝
1. Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները
պահանջելու մասին:
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքերը բացակայում են:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200 և 361 հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Յունիմայն» ՍՊ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-20/4» ծածկագրով մրցույթի արդյունքում «Յունիմայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 01.04.2024թ.-ի թիվ 112 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. Պատասխանող՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում դատարան ներկայացնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-20/4» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ իր /պատասխանողի/ տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Վահագն Թորոսյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am